

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է
ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄՆՋԱԽԱՂԻ ՓԱՌԱՏՈՆԻ ԲԱՑՄԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**

28.08.2014թ.

Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանն այցել է մարզի Ծաղկաձոր համայնք և մասնակցել Լ. Ենգիբարյանի անվան մնջախաղի թատրոնների միջազգային 4-րդ փառատոնի բացման հանդիսավոր արարողությանը:

Փառատոն անցկացնում է Երևանի մնջախաղի պետական թատրոնը՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ և Ծաղկաձորի քաղաքապետարանի հովանավորությամբ:

Հարկ է նշել, որ Մնջախաղի միջազգային փառատոնը հիմնադրվել է 2008 թվականին և անցկացվում է 2 տարին մեկ անգամ՝ Ծաղկաձորում, բացօթյա բեմահարթակների վրա: 2010 թվականից այն կրում է Լեոնիդ Ենգիբարյանի անունը: Մնջախաղի միջազգային փառատոնի նպատակն է հայ արվեստասերներին ներկայացնել արտերկրի լավագույն մնջախաղի թատերախմբերին և անհատ մնջախաղացներին: 2008 թվականից մինչ օրս փառատոնին մասնակցել են ավելի քան 20 երկրի մնջախաղի ժանրի թատերախմբեր, ինչպես նաև հայաստանյան թատերախմբեր և անհատ կատարողներ: 2014 թվականին՝ միջազգայի 4-րդ փառատոնին մասնակցության հայտ ներկայացրել են Ճապոնիայից, Ֆրանսիայից, Իրանից, Թայլանդից, Գերմանիայից՝ անհատ կատարողներ և թատերախմբեր: Փառատոնին կմասնակցեն նաև հայաստանյան երիտասարդական թատերախմբեր և անհատներ ինչպես մնջախաղի, այլ նաև կրկեսային, պարային և պլաստիկ ժանրերի: Կանցկացվեն վարպետության դասեր պրոֆեսիոնալների և հանդիսատեսի համար: